



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ
ՀԻՄՆԻՍՏԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՄՍՏԵԱՆ ԹԵՄԻ
WESTERN PRELACY
OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA
 Archbishop Moushegh Mardirossian, Prelate
 Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745, E-mail: Prelacy@aol.com



ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՆԱՀԱՏԱԿՆԵՐՈՒՆ ՆՈՒԻՐՈՒՄԾ ԱԶԳ. ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ՁԵՆՆԱՐԿ

**ՅԱՐՈՒԹ ՍԱՍՈՒՆԵԱՆ ԿԸ ԲԱՆԱԽՕՍԷ.
 «ՆՈՐ ՄՕՏԵՅՈՒՄՆԵՐ ՄԵՐ ՎԱՂԵՄԻ ՊԱՅԱՆՋՆԵՐՈՒՆ»**

Ապրիլ ամիսը բազմաթիւ խորհուրդներով լեցուն է մեզի՝ հայութեան համար: Կ'ոգեկոչենք Ցեղասպանութեան զոհ գացած մեր նահատակներուն յիշատակը եւ կը վերանորոգենք մեր ազգային ու հողային պահանջները հաւատարմօրէն ու աննահանջ կերպով շարունակելու հայութեան ուխտը:

Այս մօտեցումով, Արեւմտեան Թեմի Ազգային Առաջնորդարանը կազմակերպած է դասախօսական ձեռնակ մը, որ տեղի պիտի ունենայ Կիրակի, 15 Ապրիլ 2007, երեկոյեան ժամը 6ին, Ազգ. Առաջնորդարանի «Տիգրան եւ Չարուհի Տեր Ղազարեան» նորակառոյց սրահին մէջ (6252 Honolulu Ave., La Crescenta):

Ձեռնարկը կը վայելէ Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեանի հովանաւորութիւնը: Իբրեւ բանախօս հրաւիրուած է ծանօթ խմբագիր ու ազգային գործիչ Յարութ Սասունեան, որ պիտի խօսի մեր անժամանցելի իրաւունքները նոր դարաշրջանի պահանջներուն հարկադրած մօտեցումներով հետապնդելու միջոցներուն մասին: Յարգելի դասախօսը պիտի անդրադառնայ մեր պահանջատիրութեան կտրած հանգրուաններուն, ապա նաեւ լուսարձակի տակ պիտի առնէ մեր ժամանակներու քաղաքական ու դիւանագիտական աշխարհներուն ընձեռած պայմաններն ու անոնց համապատասխանաբար՝ մեր պայքարը շարունակելու կարելիութիւնները: Ձեռնարկին կազմակերպումը վստահուած է Ազգ. Առաջնորդարանի Առաքելութեան Տարածման յանձնախումբին (Western Prelacy Outreach Committee): Յայտագիրը ունի գեղարուեստական բաժին:

Ազգային Առաջնորդարանի Ապրիլեան այս ձեռնարկը առաջին հրապարակային հանդիսութիւնն է, որ տեղի պիտի ունենայ Ազգ. Առաջնորդարանի նորակառոյց շէնքի սրահին մէջ: Ծանօթ է, որ Ազգ. Առաջնորդարանի գրասենեակները Փետրուարէն ի վեր կը գործեն նորակառոյց շէնքին մէջ, որուն սրահը կոչուած է դառնալու մշակութային եւ ազգային նմանօրինակ հանդիսութիւններու ժամադրավայր մը:

Վստահ ենք, որ մեր ժողովուրդը, մանաւանդ երիտասարդ սերունդը մասնակից պիտի ըլլայ ապրիլեան այս ձեռնարկին ու հաղորդակից պիտի դառնայ մեր պայքարի ոլորտներուն:

WESTERN PRELACY GENOCIDE COMMEMORATION

**HARUT SASSOUNIAN TO LECTURE ON
“NEW APPROACHES TO OUR LONG-STANDING DEMANDS”**

In commemoration of the 92nd anniversary of the Armenian Genocide, the Western Prelacy has organized a lecture under the auspices of H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, and organized by the Prelacy Outreach Committee, featuring keynote speaker Mr. Harut Sassounian. The event will take place on Sunday, April 15, at 6:00 p.m., at the Prelacy “Dikran and Zarouhi Der Ghazarian” Hall (6252 Honolulu Ave., La Crescenta).

United Armenia Fund President and LINCY foundation Vice-Chair Mr. Harut Sassounian will lecture on new approaches we must take to achieve our long-standing demands in this new age.

This commemoration is the first public event to take place at the new Prelacy building and the first of many cultural events planned at the hall.

This email is broadcasted by [Western Prelacy of the Armenian Church of America](http://www.westernprelacy.org) - 6252 Honolulu Ave, La Crescenta, CA 91214 - USA. If you have any questions or comments, please do not hesitate to call us at (818) 248-7737 or send us your request by email to info@westernprelacy.org, Visit our Website www.westernprelacy.org Copyright . 2007 All rights reserved.